



ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ Ս

ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

ՖԻԶԻՈԼՈԳԻՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ.— Երեւանը ոչ միայն Հայաստանի, այլև Սովետական Միության կուլտուրական խոշոր կենտրոններից մեկն է։ Այստեղ հաճախ հրավիրվում են անդրկովկասյան և համամիութենական նշանակություն ունեցող գիտական կոնֆերենցիաներ, խորհրդակցություններ, հավաքույթներ։

Անցյալ դեկտեմբերի սկզբներին տեղի ունեցավ ֆիզիոլոգների գիտական նստաշրջան (սեսիա), նվիրված բարձր նյարդային գործունեության հարցերին։ Նստաշրջանը հրավիրված էր Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ֆիզիոլոգիայի ինստիտուտի և ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի ֆիզիոլոգիական լաբորատորիայի կողմից։ Նստաշրջանի աշխատանքներին մասնակցում էին Մոսկվայի և Երևանի մեծ թվով գիտնականներ։

Բացելով նիստը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Գ. Բոնիոսյանը նշեց համատեղ նստաշրջանի նշանակությունը Երևանի և Մոսկվայի գիտնականների փոխադարձ ստեղծագործական կապի հետագա ամրացման գործում։ Մի քանի օր տեղոյ աշխատանքների ընթացքում լավեցին 15 գեկուցումները՝ նվիրված դանդուղի ֆիզիոլոգիայի ընդհանուր և մասնակի հարցերին։ Հիմնական գեկուցումով հանդես եկավ ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի ֆիզիոլոգիական լաբորատորիայի վարիչ, ուսու հուշակալոր գիտնական-ֆիզիոլոգ Ի. Պավլովի սաղանդավոր աշակերտ Նվրաս Հասարայանը։ Մյուս գեկուցումները կարգացին Երևանի և Մոսկվայի գիտնականները։

Նստաշրջանը մեծ հետաքրքրություն առաջ բերեց Երևանի գիտական հասարակայնության շրջաններում և կարևոր նշանակություն ունեցավ ֆիզիոլոգիական գիտության հետագա զարգացման համար Հայաստանում։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԳԱՐԱՆՈՒՄ.— Հայաստանի Պետական Թանգարանը, որն այժմ գտնվում է Գիտությունների ակադեմիայի իրավասության տակ, տարեցտարի հարստանում է։ Սկսվել է Թանգարանի

վերակառուցումը և ընդարձակումը։ Դվինում, Աշտարակում, Արթիկում, Գառնիում կատարվող հնագիտական պեղումների շնորհիվ Թանգարանի պատմական բաժինը ստացել է բազմաթիվ նոր նմուշներ։ Դրանց թվում կան ապակյա մի շարք հետաքրքիր իրեր, որոնք վկայում են, որ դեռևս 11-րդ դարում Հայաստանում գոյություն է ունեցել ապակու արտադրություն։ Ստացված են նաև մեծ քանակությամբ պղնձյա, արծաթե, բրոնզե և հախճապակյա իրեր։ Նմուշների ընդհանուր քանակը ավելացել է մի քանի հազարով։

Թանգարանի նորագույն բաժինը համարվում է մի ամբողջ շարք նոր նմուշներով, որոնք արտացոլում են Հայաստանի ժողովրդական արտադրության և կուլտուրայի զարգացումը սովետական իշխանության տարիներին։

ՀԱՅԱԿԱՆ ԳՑՈՒՂԻ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ.— Սովետական Հայաստանի կառավարությունը մշտապես հոգատար է գյուղական վայրերի բնակչության կուլտուրական աճի նկատմամբ։ Ներկայումս ռեսպուբլիկայի գյուղերում գործում են 964 ակումբներ, 308 գրադարաններ, բազմաթիվ կինո-թատրոններ։ Ռադիոն մուտք է գործել ամենահեռավոր լեռնային գյուղերը։ Միայն 1953 թվականի ընթացքում ռադիոցանցը ընդարձակվել է չորս հազար կետով։ Գյուղական գրադարանների գրքերի ընդհանուր թիվը հասնում է շուրջ մեկ և կես միլիոն հատորի։ Նրանք ժամանակին ստանում են Երևանում հրատարակվող բոլոր նոր գրքերը։ Այժմ չկա ռեսպուբլիկայում այնպիսի գյուղ, որի բնակիչները չստանան մի քանի տասնյակ, իսկ խոշոր գյուղերը՝ մի քանի հարյուր օրինակ թերթեր և այլ պարբերականներ։

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՍՏՂԱԳԻՏԱԿԱՆ-ԵՐԿՐԱՋԱՓԱԿԱՆ (ГЕОДЕЗИЯ) ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՍՈՒՆՔ ԵՐԵՎԱՆՈՒՄ.— Անցյալ դեկտեմբերի կեսերին Երևանում տեղի ունեցավ Բյուրականի աստղագիտությանի աշխատողների, միջնակարգ պարոնների և բարձրագույն ուսումնական հաստատությունների աստղագիտական ու կրկրաշափական առարկաների

դաստատուների և դասախոսների ընդհանուր ժողով: Քննություն առնվեց Համաժողովին անկախ աստղագիտական-երկրաչափական ընկերության հայկական բաժանմունք ստեղծելու հարցը: Ընկերության խնդիրների մասին զեկուցեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը: Ժողովն ընտրեց բաժանմունքի խորհուրդ, որի նախագահ ընտրվեց պատվարժան գիտնական Վ. Համբարձումյանը:

Ընկերությունն իր առաջ խնդիր է դրել՝ բնակչության մեջ տարածել աստղագիտական-երկրաչափական գիտելիքներ, հրատարակել այդ հարցերին վերաբերող հանրամատչելի գիտական բրոշյուրներ և նպաստել աստղագիտության ու երկրաչափության դասավանդման բարելավմանը ռեսպուբլիկայի դպրոցներում ու բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Ինֆոնիս ԱՐՎԵՍԱԳԵՏՆԵՐ.— Սովետական Հայաստանում շատ կան ինքնուս արվեստագետներ՝ տաղանդավոր ոսկերիչներ, գորգագործներ, փորագորիչներ, քարտաշներ, քանդակագործներ, ասեղագործներ, նկարիչներ: Նրանց բոլորին համախմբում, ուղղություն և օգնություն է ցույց տալիս Ժողովրդական ստեղծագործության ռեսպուբլիկական տունը:

Վերջերս Տոմար ձեռք բերեց ինքնուս արվեստագետների մի շարք նոր գործեր: Այդ գործերի թվումն են հայտնի քանդակագործ-վարպետ Հարություն Տարակյանի նոր գործը՝ Վարպետը բացառիկ հմուտությամբ և ճաշակով գույնզգույն թելերով գործել է լին մեծ ժողովրդի առաջնորդ Մատ Յվե-դունի նկարը՝ հրկված լինական մանրանկարչության նմուշներով:

Մյուս գործերից աչքի է ընկնում ինքնուս քանդակագործ Արտաշես Պետրոսյանի նատյուր-մորտ քանդակը, որը պատրաստված է ֆիլդիտ կոշիկ քարից և պատկերում է մրգեր ու զինով լի կուժ՝ իր գավաթով: Այդ քանդակը տաղանդավոր արվեստագետի հինգերորդ գործն է:

Քարտաշ-վարպետ Հովսեփ Մարգարյանը ներկայացրել է Մովսես Խորենացու, Միքայել Նալբանդյանի և Հովհաննես Բուսանյանի կիսանդրիները՝ պատրաստված բաց մարմնագույն քարից: Վարպետի աշխատանքը առավել մեծ արժեք է ստանում այն պատճառով, որ նա կիսանդրիները պատրաստել է առանց էսքիզների:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՏԱՐԱՎՄԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ.— Անցյալ դեկտեմբերին ներկանում տեղի ունեցավ Քաղաքական և գիտական գիտելիքների տարածման Հայկական ընկերության երրորդ համագումարը:

1953 թվականի ընթացքում ընկերության անդամների միջոցով ռեսպուբլիկայի քաղաքներում և գյուղերում կարդացվել է շուրջ 9500 դասախոսություն: քաղաքական, գիտական, հասարակական, ամենօրյա գիտական, գրական և այլ հարցերի մասին: Համագումարն ընտրեց պատգամավորներ Քաղաքական և գիտական գիտելիքների տարածման Համաժողովին հայկական ընկերության երկրորդ համագումարի համար:

ՀԵՏԱՔՐԹԻՐ ՀԱՄԵՐԳ.— Դեկտեմբերի 25-ին, 26-ին և 27-ին ներկանում, Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում կատարվեց նորվեգական հուլիսավոր դրամատուրգ Հենրիկ Իբսենի և ակադեմիկոս երաժշտագետ Էդ. Գրեգի «Պեր Գյունտ» դրական-երաժշտական հայտնի ստեղծագործությունը: Համերգներն անցան բացառիկ հաջողությամբ և կարևոր իրադարձություն հանդիսացան ներկանի երաժշտական կյանքում:

Հենրիկ Իբսենը իր հայտնի աշխատության համար հիմք է ընդունել նորվեգական ժողովրդական հերոսներից մեկը և սուր խորագրանման է ենթարկել իր ժամանակակից հասարակության ներկայացուցիչներին եսամոլությունում ու բարոյական ուշադրությունը: «Պեր Գյունտ»-ի երաժշտության մեջ, որը գրել է Էդ. Գրեգը, իր արտացոլումն է գտել նորվեգական ժողովրդական հարուստ մելոսը, նրա ազգային յուրահատկությունը, խորը հուզականությունը:

«Պեր Գյունտ»-ի կատարմանը մասնակցում էին Մոսկվայի և Ներկանի հայտնի արվեստագետները, Հայֆիլհարմոնիայի երգեցիկ խումբը և սիմֆոնիկ նվագախումբը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՐԸ.— Դեկտեմբերի 27-ին Պետական պատկերասրահում քաջվեց Հայաստանի նկարիչների 1953 թվականի ցուցահանդեսը: Ցուցահանդեսում ներկայացված է մոտ 400 գործ՝ յուզանկարներ, քանդակներ, գրաֆիկ աշխատություններ, կերպական արվեստի նմուշներ: Ականավոր արվեստագետների նոր գործերի հետ միասին լայն տեղ է տրված երիտասարդ սերնդի ներկայացուցիչներին, որոնք իրենց վրձինի համար նույն ընտրել հայրենի երկրի բնությունը, կուլտուրական վերելքը, մարդկանց ստեղծագործական առօրյան:

Ցուցահանդեսը մեծ հետաքրքրություն է առաջ բերել: Ամեն օր սրահներում կարելի է հանդիպել բազմաթիվ այցելուների:

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԱՅԻ 30 ՏԱՐԻՆ.— Լրացավ ներկանի Կոնսերվատորիայի անվան Պետական կոնսերվատորիայի գոյության 30 տարին: Այդ նշանակալից տարեթիվը Սովետական Հայաստանի հասարակայնությունը նշեց ջերմորեն: Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում այդ առթիվ տեղի ունեցավ հանդիսավոր երեկո: Կոնսերվատորիայի գործունեության մասին զեկուցումով հանդես եկավ ռեսպուբլիկայի ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Գ. Բուդաղյանը:

Պետական կոնսերվատորիան դարձել է Սովետական Հայաստանի կուլտուրական խոշորագույն օջախներից մեկը, որտեղ պատրաստվում են երաժշտական բնագավառի գործիչներ: Իր գոյության ընթացքում այն տվել է ավելի քան 400 հոգի տարբեր մասնագիտություն ունեցող երաժշտագետներ, երգիչներ, երաժիշտներ: Այստեղ են ստացել իրենց կրթությունը մի շարք տաղանդավոր երաժշտագետներ, ինչպիսիք են Ա. Սոթյանը, Ա. Հարությունյանը, Ա. Բաբաջանյանը, Բ. Ալթունյանը և ուրիշներ:

Հոբելանի առթիվ Կոնսերվատորիայի դասախոսանքին և ուսանողներին ողջունեցին ռեսպուբլիկայի պետական և հասարակական մի շարք մարմինների ներկայացուցիչները: Ստացվել էին ողջույնի բազմաթիվ հեռագրեր Սովետական Միության եղբայրական ռեսպուբլիկաների, Մոսկվայի ու Լենինգրադի հասարակական կազմակերպություններից և ավանավոր երաժշտագետներից:

Երեկոյն ավարտվեց ճոխ համերգով, որին մասնակցում էին Կոնսերվատորիայի սաները:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍՏՆՂՄԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՂԱՐՎՆԱԿԱՆ ԻՆՔՆԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ— ԼձՀՆԻ տարի աշնանը, սովետական կարգերի հաստատման տարեդարձի առթիվ, Հայաստանում տեղի է ունենում ժողովրդական ստեղծագործության և գեղարվեստական ինքնագործունեության ստուգատես՝ օլիմպիադա:

Օլիմպիադան սկսվում է գյուղերում և ապա շրջաններում: Առավել շնորհալի խմբերը և անհատ կատարողները իրավունք են շահում մասնակցելու ռեսպուբլիկական ստուգատեսին, որը տեղի է ունենում Երևանում: Վերջում տրվում է առաջնությունը շահած խմբերի և մենակատարների եզրափակիչ համերգ:

Այդ ստուգատեսները, որոնց մասնակցում են ինքնուս երգիչներ, նվագողներ, պարողներ, արտասանողներ, կատակարարներ, գերասաններ, միշտ էլ դառնում են ժողովրդական ստեղծագործության իսկական տոն, ցույց են տալիս գեղարվեստական ինքնագործունեության զարգացումը ռեսպուբլիկայում:

Անցյալ 1953 թվականի օլիմպիադային մասնակցեցին 980 ինքնագործ խմբեր՝ շուրջ 22.000 կատարողներով:

Իրենց հմուտ կատարմամբ աչքի ընկան Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի և Կիրովականի քաղաքային կուլտուրայի տան սիմֆոնիկ նվագախմբերը, Արտաշատի շրջանի կուլտուրայի տան և Երևանի արհեստագործական ուսումնարանների սաներից կազմված երգի ու պարի խմբերը, Եահումյանի շրջանի Ստալինի անվան գործվածքեղենի գործարանի և Լենինականի ուսուցիչների տան երգեցիկ խմբերը, ինչպես նաև մի շարք անհատ կատարողներ:

Առաջնությունը շահած խմբերը և անհատ կատարողները արժանացան Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի և Կուլտուրայի մինիստրության պատվոգրերի, ինչպես նաև դրամական պարգևների:

ԱՐԴՅՈՒՆԱՐԵՐԱԿԱՆ ՆՈՐ ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ—

Հայաստանի արհեստագործական կոոպերացիան ընդարձակում է իր արտադրական ձեռնարկությունների թիվը: Ներկայումս Երևանում կառուցվում է մահճակալների արտադրության նոր գործարան: Այն կլինի ռեսպուբլիկայում գոյություն ունեցող այդ կարգի գործարաններից ամենախոշորը և տարեկան կարտադրի մինչև 45.000 հատ մահճակալ:

Երևանում, Լենինականում և Նոր Բայազետի շրջանի Սարուխան գյուղում կառուցվում են գորգագործական ձեռնարկություններ: Կիրովականում ավարտվում է պատրաստի հագուստեղենի և կոշիկի գործարանների շինարարությունը: Ընթացիկ տարում Երևանում կառուցվելու են նաև կահույքի, ինչպես և ցինկապատ ամանեղենի գործարաններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵՌՆԱԳՈՐԾՆԵՐԻ ՔԱՂԱՔԸ— Ղափանն իրավամբ համարվում է Հայաստանի լեռնագործների քաղաքը: Գնալով գեղեցկանում և բարեկարգվում է այն: Զգալի աշխատանքներ են կատարվել անցած 1953 թվականին: Զանգեզուրի պղնձահանքերի վարչությունը, արդյունաբերական մյուս ձեռնարկությունները և քաղաքային Սովետը բնակարանային շինարարության և քաղաքի բարեկարգման վրա ծախսել են գրեթե երկու անգամ ավելի միջոցներ, քան նախորդ 1952 թվականին: Բացվել են երեք նոր փողոցներ: Ասֆալտապատվել է մի քանի հազար քառակուսի մետր տարածություն: Կառուցվել են բազմահարկ մի քանի շենքեր: Բացի այդ 50 բնասիրիներ իրենց համար կառուցվել են նոր տներ:

Կառուցվել է միջնակարգ դպրոցի նոր շենք, բուժարան, հանքափորների հանգստի տուն, պահածոների և հացի գործարան: Այժմ կառուցվում է մսի կոմբինատ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՏԱՌՆԵՐԸ— Սովետական Հայաստանը հարուստ չէ բուսականությամբ: Անտառները կազմում են երկրի ընդհանուր մակերեսի միայն 10%—ը: Վերջին 15—20 տարում զգալի աշխատանք է կատարված եղած անտառները թարմացնելու, նոր անտառներ տնկելու ուղղությամբ: Մի շարք շրջաններում աշխատանք է տարվում ծառերի նոր տեսակներ աճեցնելու համար: Անտառային տարածությունները տարեցտարի ընդարձակվում են: Երկրորդ տարին է ինչ աշխատանքներ են տարվում Սևանի ափերի անտառապատման ուղղությամբ: Այս տարի այդ աշխատանքներն ավելի մեծ ծավալ կընդունեն: Նախատեսված է լճի ափերին տնկել մի քանի տասնյակ հազար հեկտար անտառներ:

